ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼ ԱԿԱՆԱՎՈՐ ԽՈՐԵՆԱՑԻԱԳԵՏԸ

(Ալբերտ Մուշեղյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)

Բանասիրական գիտությունների դոկտոր Ալբերտ Մուշեղյանի գիտական վաստակի մեջ տասնամյակներ շարունակ փայլուն կերպով ներդաշնակվում են բանասիրության և պատմագիտության ոլորտները՝ հայ պատմաբանասիրական միտքը հարստացնելով նորանոր արժեքներով:

*Լայն է գիտնական-հայագետի պատմական հետազոտությունների շրջանակը՝ Մովսես Խորենացու Հայկյան ազգաբանությունը, **Արամ** անունը՝ հայ ժողովրդի երկրորդ անվանադիր-նախնու անուն, Հայկազունների հարստության վերահաստատումը Վանի՝ Արարատյան (Ուրարտու) թագավորությունում, Տիգրան Երվանդյանի և Տիգրան Մեծի կերպարները՝ ազգային համախմբման խորհրդանիշ, Մեսրոպ Մաշտոցը և նախամաշտոցյան հայ գիրը, V դարի հայ մատենագրության ժամանակագրական նոր դասակարգումը, Գրիգոր Լուսավորչի անվան և պաշտամունքի խորհրդապաշտական արգելքը 430-ական թթ. ասորի կաթողիկոսների օրոք, «Ագաթանգեղոսի պատմության» ստեղծման հանգամանքները, Վարդանանց Պատմության հեղինակ Եղիշեն և նրա անձնավորության նոր բացահայտումը, և այսպես շարունակ:*

Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության հարցերին անդրադառնալը պատմագիտության բնագավառում Ա. Մուշեղյանի գիտական գործունեության սկզբնական շրջանում ընթացել է ակադ. Սուրեն Երեմյանի հետ մասնագիտական հարցերի շուրջ խորհրդակցելու միջոցով: Դրանով իսկ, նրա հետազոտություններում իր ուրույն տեղն ունի Հա-յաստանի պատմական քարտեզագրությանն առնչվող խնդիրների ուսումնասիրությունը:

Ա. Մուշեղյանը հավատարիմ է դասական հայագիտության ավանդույթներին, որպես հմուտ խորենացիագետ՝ նա նոր լուծումներ է տալիս նաև վաղուց արդեն հասունացած խնդիրներին: Դրա վառ վկայությունն է «Մովսես Խորենացու դարը» կոթողային մենագրությունը (Ե., 2007), որի յուրաքանչյուր բաժին ունի խորիմաստ բովանդակություն: Նա մասնագիտական մեծ պատասխանատվությամբ վերլուծում է «Պատմութիւն Հայոց» երկում Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները, որոնցից շատերը դեռևս XIX դ. երկրորդ կեսից «գերքննադատների» թիրախն են դարձել: Առավել զավեշտական է, որ խորե-

նացիագիտության նվաճումներն անտեսելով՝ առանձին հեղինակներ իրենց «քննադատությունը» անհիմն ձևով «հիմնավորելու» նպատակով իջնում են Պատմահորը նվաստացնելու գռեհները: Ինչպես նշել է Ա. Մուշեղյանը, Մովսես Խորենացու ծայրահեղ քննադատության գագաթը պետք է համարել 1978 թ. պրոֆ. Ռոբերտ Վ. Թոմսոնի հրատարակած՝ Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի անգլերեն թարգմանության ներածությունը, «որի մեջ Մովսեսը ներկայացված է իբրև VIII դ. երկրորդ կեսին ապրած մի վանական, որն իր հերյուրած Պատմության հանդեպ ընթերցողներին հավատ և վստահություն ներշնչելու համար ծպտվել է V դարից հայտնի Մովսես փիլիսոփայի ու թարգմանչի դիմակով և ներկայանում է Սահակի ու Մեսրոպի աշակերտ...» (էջ 13):

Ա. Մուշեղյանը չի բավարարվում «գերքննադատության» ներկայացուցիչների հերյուրանքները վեր հանելով և քննադատելով, այլ առարկայորեն քննարկում է Պատմահոր՝ բանահյուսական և պատմագիտական խորը իմացության մասին վկայող այն բոլոր հաղորդումները, որոնք նրա երկում կազմում են մինչ իր ժամանակները հասնող Հայոց ամբողջական պատմության հիմքը: Մովսես Խորենացու կենսագրական բնույթի տեղեկությունները հետազոտողը դիտում է նրա ապրած՝ V դարի իրողությունների լույսի ներքո, դրանով մերկացնելով «գերքննադատների»՝ Պատմահորը իր դարաշրջանից հետագա դարեր տեղափոխելու և այդ կարգով նրա երկը արժեզրկելու ապարդյուն ճիգերը:

Ա. Մուշեղյանը փայլուն տիրապետում է հին և միջին դարերի պատմական փաստերը շարունակականության մեջ դիտարկելու և խնդրահարույց կնճիռներին լուծումներ տալու մեթոդաբանությանը: Այս կարգով նա քննել է, մի կողմից՝ Հայկազն նահապետ Արամի գործունեությանը նվիրված՝ Մովսես Խորենացու և Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները, իսկ մյուս կողմից՝ Հայկազն Արամին վերագրված Հուստինիանոսյան Հայքերի հարցը:

Ինչպես նշել է Ա. Մուշեղյանը, 1883 թ. Ալֆրեդ Գուտշմիդը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ «մատնացույց էր անում այն պատմական «կեղծիքը», որ պարսիկներն առաջին անգամ Բյութանիա են հասել ոչ թե 363 թ. Շապուհ II թագավորի ժամանակ, այլ 608 թ. և, հետևաբար, այս փաստին տեղյակ հեղինակը չէր կարող ապրած լինել V դարում...» (էջ 177): Ա. Մուշեղյանը մանրակրկիտ հետազոտությամբ հերքեց այս զրպարտությունը: Նա ցույց տվեց, որ Ամմիանոս Մարկելինոսը լատիներենով գրված «Հռոմեական պատմություն»-ում հայտնում է, որ ոչ թե Հուլիանոսը, այլ Կոստանդիանոսն էր, որ գրգռեց պարթևների (իմա՝ պարսիկների) զայրույթը, և նրա պատճառով հռոմեական զորքերը պարտվեցին, իսկ պարսիկները «գրավեցին բոլոր (պրովինցիաները) մինչև Բյութանիա և Պրոպոնտիայի ափերը» (էջ 185): Խնդրո առարկա հարցի հետազոտությունը կատարելով՝ Ա. Մուշեղյանը հիմնավորապես եզրակացրել է. «Պարսիկների առաջին արշավանքը մինչև Բյութանիա և Բոսփորի ծովափը տեղի է ունեցել ոչ թե 608 թվականին, ինչպես պնդում են եվրոպացի պատմաբանները Ա. Գուտշմիդից մինչև Ռ. Թոմսոն, այլ 330-ական թվերի վերջին: Այս փաստը նորություն է ոչ

միայն պատմագիտության մեջ առհասարակ, այլև Իրանի պատմության համար մասնավորապես» (էջ 188, տե՛ս նաև էջ 200-211):

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում Վասպուրական նահանգի հիշատակմանն առնչվող խնդրի համակողմանի քննության հետ մեկտեղ, Ալբերտ Մուշեղյանը ուշադրություն է դարձրել Մեծ Հայքի **մարդպետություն** գործակալության հարցին, մասնավորապես լուծելով ,մարդպետե եզրույթի խնդիրը: Ուշադրություն դարձնելով Մովսես Խորենացու՝ մինչ այժմ գիտականորեն չուսումնասիրված համապատասխան հաղորդմանը, Ա. Մուշեղյանը նշել է, որ մարդպետները սերում էին ոչ թե իրանական մարդերի ցեղից, այլ «մեր նախնի Հայկից ծագած հին թագավորների սերունդներից» (էջ 233-234): Ըստ Ա. Մուշեղյանի, **«մարդպետ** աղավաղված է **մարզպետ** բառից, ուղիղ ձևը վկայված է Եղիշեի մոտ»: Հետազոտողը նշել է, որ հետագա որոշ մատենագիրներ ևս պահպանել են գրության նախնական՝ ճիշտ ձևը. «Մարզպետունիք... մարզպետական, մարզպանական...»: Անդրադառնալով պատմագրության մեջ **վասպուր** և **վասպուրական** եզրույթների քննությանը՝ հետազոտողը նշել է. «**Վասպուրական նախարարներ** հասկացությամբ, փաստորեն, առաջին անգամ իմ կողմից գիտական շրջանառության մեջ է դրվում պատմագրությանը մինչև վերջերս անծանոթ պատմական նոր կատեգորիա՝ թագավորող տան արքայազններից առաջ եկած, ապա նաև արքայական ծագում ունեցող նախարարների դասը» (էջ 299):

Ա. Մուշեղյանը չի հանդուրժում կեղծարարության որևէ դրսևորում թե՛ Մովսես Խորենացու ապրած ժամանակի և թե՛ ընդհանրապես Հայոց պատմության մյուս բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ: Այսպես, գերմաներենի իր անառարկելի իմացությամբ, նա թարգմանել է Հայոց ցեղասպանության մասին վկայող Ա. Թ. Վեգների «Ճանապարհ առանց տունդարձի» գիրքը (Ե., 2000): Հետագայում ջախջախիչ քննադատության ենթարկեց Արմին Թ. Վեգների լուսավոր հիշատակն անարգող պրոֆ. Մարտին Թամկեի բանսարկությունները: Ա. Մուշեղյանը գերմանացի սպաների և դիվանագետների՝ 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին վկայությունների հրապարակմամբ մերկացրեց թուրքական կեղծարարությունները: Արցախյան շարժումից սկսած մինչև այսօր գիտնականը իր հրապարակախոսական գործունեությամբ շարունակաբար պայքար է մղում տեղեկատվական պատերազմում ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարների: Մեծ հայագետի և հայրենասերի նվիրվածությունը ազգային անվտանգության գաղափարական կարևորագույն գործին բարձր է գնահատվել «Արցախյան ազատագրական պատերազմը 1988-1994 թթ.» հանրագիտարանում:

Տաղանդը տարիք չի ճանաչում, իսկ տարիքին տրված է տաղանդին անվկանդ ճանապարհ ապահովելու առաքելությունը:

Ողջերթ մաղթենք հայագիտության նվիրյալ Ալբերտ Մուշեղյանին՝ իր բազում մտահղացումների իրականացման ճանապարհին:

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.
Պատմական գիտություններ դոկտոր